

- Նախ, անհատի անձնական տեսակետը իր իւրայատուկ դերը կը կատարէ եւ որ կը բացայայտուի *ենթակայականութեամբ*⁽⁹⁰⁾ (Subjectivity), որ իր կարգին, դատումի մը կամ իրի մը, պատահարի մը կամ իրավիճակի մը ենթակայէն կախեալ ըլլալն է: Այստեղ անհատը (ենթական) կը ներկայանայ, որպէս ինքնագիտակից, ճանչցող եւ գործօն «ես»ը, ինչպէս յիշուած է «Բարոյագիտութեան Հիմնական Հասկացութիւններ»ու յատուկ բաժնին մէջ: Այլ խօսքով, անհատի բանականութիւնը եւ ինքնավարութիւնը (կամ ազատութիւնը) զինք կը մղեն քննարկելու եւ քննադատելու բարոյական կանոններն ու արժէքները:
- Ենթակայականութեան կը հակադրուի *առարկայականութիւնը*⁽⁹¹⁾ (Objectivity), որ դատումի մը կամ իրի մը, պատահարի մը կամ իրավիճակի մը ենթակայէն անկախ ըլլալն է, ինչպէս յիշուած է «Բարոյագիտութեան Հիմնական Հասկացութիւններ»ու յատուկ բաժնին մէջ: Այս իմաստով, *բարոյաքննադատութեան* ատեն, կարելի եղած չափով, հարցերուն առարկայական մօտեցում ցուցաբերելու է:
- Ապա, եթէ նկատի առնուին բարոյագիտութեան հիմնաւորման հարցերը, կը բացայայտուի *բարոյագիտական յարաբերապաշտութիւնը*⁽⁹²⁾ (Relativism) մը, որ փիլիսոփայութեան ու բարոյագիտութեան պատմութեան ընկերակ-ցող գլխաւոր հարցերէն մէկը եղած է: Այս հարցը երեւան կ'ելլէ, երբ ընկերութեան մը մէջ ընդունուած բարոյական կանոնները եւ արժէքները, զանազան պատճառներով, հարցական կը դառնան եւ մարդիկ այդ բարոյական կանոններն ու արժէքները կը զննեն ու, *կասկածապաշտութեամբ* (Scepticism) մը, կը փորձեն անոնց ետին փնտռել թաքնուած նպատակներ: Այս պարագային, բնականաբար, ընդունուած բարոյական կանոններն ու արժէքները վնաս կրելով յարաբերական կը դառնան եւ անկումի կը դատապարտուին:
- Վերջաւորութեան, հարկ է նկատի առնել նաեւ բարոյականութեան հանդէպ այն ծայրայեղ դիրքաւորումը, որ ընդհանրապէս բացասական ու մերժողական է: Այլ խօսքով, եթէ մէկ կողմէն կան բարոյախօսներ կամ մորալիստներ (Moralist), որոնք կը ջատագովեն բարոյականութիւնը, միւս կողմէն կան նաեւ բարոյականութեան ընդդիմադիրներ, ամորալիստներ (Amoralist), զորս կարելի է, հայերէնով, *ապաբարոյախօսներ* կոչել:



(90) **Ենթակայականութիւն** (Subjectivity) հասկացութեան մասին, տե՛ս Մաս – 9, Էջ 437:

(91) **Առարկայականութիւն** (Objectivity) հասկացութեան մասին, տե՛ս Մաս – 9, Էջ 382:

(92) **Յարաբերապաշտութիւն** (Relativism) հասկացութեան մասին, տե՛ս *Բարոյագիտութեան Հիմնաւորումը*՝ Մաս – 4, Էջ 138 եւ Մաս – 6, Էջ 229: